Ալեքսանդր Շիրվանզադե

Գեղարվեստական ժողով

Սքանչելի էր անցյալ կիրակի հայոց դրամատիկական ընկերության անդամների ընդհանուր ժողովը:

Գեղարվեստը ժպտում էր Արտիստիքական ընկերության փառահեղ դահլիճի բոլոր անկյուններից:

Ներկա էին հայկական աշխարհի բոլոր էսթետիկները, սկսած հիսնամյա խայտաճամուկ «երիտասարդներից» մինչև քսանուհինգամյա մռայլ ծերունիները:

Միաձայն համաձայնությամբ ժողովի նախագահ ընտրվեց մեր անզուգական և մշտադալար Համբարձում ամին: Նա օրուկես առաջ նախագահ էր Թավրիզի Էիլավա թաղի երկրորդ (կա և առաջինը) Գրականական ընկերության ընդհանուր ժողովին և իսկույն ևեթ օդապարիկով տեղափոխվեց Թիֆլիս: Ինձ ասացին, որ երեք օր անցած նա պիտի ներկա լինի Ամստերդամի խաղաղասիրաց ժողովում, միևնույն ժամանակ ճանապարհին ռեֆերատ կարդա Ռուսիայի մի քանի այլազան ժողովներում:

Առաջին կարգում փառավորապես բազմած էր Թիֆլիսի լուսավորության իշխանը: Մեր այս բիկոնսֆիլդի աջ ու ձախ կողմերում շարե-շար նստած էին ազգիս երևելիները, ի միջի այլոց, և ես:

Նախագահը քնթով «քր՛հ» արավ, երկու մատներով սեղմեց պնչերը և ահեղագոչ ձայնով ժողովը բացված ազդարարեց:

Տիրեց ընդհանուր լռություն: Գեղարվեստագետները իրանց տեղերը դրստեցին:

Արևի պայծառ շողքերը հեղեղվեցին ներս: Օդը փափկացավ: Տրամադրությունները դարձան միանգամայն էսթետիկական: Մի քանի անհանգիստ դերասաններ պատրաստվեցին իրանց սրտերում կուտակված թույնը, վերջապես, թափելու վարչության գլխին: Իսկ վարչության անդամները իրանց բեղերը ոլորեցին թույնին թույնով պատասխանելու:

Նախքան կռիվն սկսելը, վարչության անդամ Տիգրան Հովհաննիսյանը հանդիսավոր կերպով խոստովանեց, թե վարչությունը մոռացել է մի բան, որ ծտի հիշողություն ունեցողն անգամ պարտավոր էր չմոռանալ, այն է, մոռացել է հարգել իր ներկայությամբ տարեդարձի հոգեհանգիստը հանգուցյալ այրի Մակարյանի, որ հօգուտ ընկերության կտակել է 3000 ռուբլի: Ի դեպս ասած, մի կտակ, որ շփոթեցրել է հայ բարեգործներին և նրանց շրջանում հարց զարթեցրել. «այդ ինչ բան է թատրոնը, որի օգտին կտակ է արել հայ կինը»:

Ժողովը նկատելով Տիգ. Հովհաննիսյանի վարչության կողմից կարմրելը, որոշեց հանգուցյալ կտակարարի հիշատակը հարգել մի առանձին հոգեհանգստով:

Ապա վարչության գանձապահ բժիշկ Խատիսյանը կարդաց ընկերության տարեհաշիվը: Երևաց, որ մեր թատրոնական գանձարանը չծաղկած՝ չորանում է և շուտով մկների զբոսավայրը պիտի դառնա: Թեև պ. Խատիսյանը հաշիվը կազմել էր շատ ճիշտ, շատ մաքուր, շատ օրինակելի, բայց նա ինքը բարեհաճեց սրախոսել իր մասին: Նա ասաց, որ եթե իր կազմած հաշիվը ուղարկի որևէ ցուցահանդես՝ «ՉՔԱՆՇԱՆԻ» չի արժանանալ: Ժողովը միաձայն եկավ այս եզրակացության, թե հարգելի գանձապահի հաշիվը ընդհակառակը ամենախիստ ժյուրիի կողմից, իսկ կարող է արժանանալ «ՁՔԱՆՇԱՆԻ», վասնզի նա «ՉՔԱՎՈՐՈՒԹՅԱՆ» կատարելատիպ է ներկայացնում թատրոնի գանձարանը: Միանգամայն ցանկություն հայտնվեց, որ այսուհետև վարչության հաշիվներն արժանանան ոչ թե «ՉՔԱՆՇԱՆԻ», այլ շքանշանի: Այս նպատակով որոշվեց վարչության վրա պարտականություն դնել թատրոնի գանձարանը չքավորությունից ազատելու՝ ժողովարարության միջոցով:

Խատիսյանը հավանություն չտվեց այդ վճռին, երևի, գերադասելով «ՉՔԱՆՇԱՆԸ» շքանշանից:

Այնուհետև սկսվեց պայքարը: Դերասան Աբելյանը բաց արավ մի մեծ տոպրակ, որ լիքն էր դերասանների դժգոհություններով վարչության դեմ: Եվ տոպրակից տեղացին մեղադրանքներ՝ մեղարդանքների հետևից: Պարզվեց, գլխավորապես, որ վարչությունը շատ ինքնուրույն կերպով է վարում մեզնում թատրոնի գործը: Ես մոռացել եմ Աբելյանի բոլոր ասածները: Ընդհանուր միտքը այն է, թե վարչությունը մեծ մասամբ տրամադիր է քնելու, քան արթուն մնալու, թե նրա քունը մանավանդ սաստկանում է այն ժամանակ, երբ իսկապես պիտի արթուն լինի, այսինքն ամառը, երբ հարկավոր է պիեսներ ընտրել, խումբ կազմակերպել, թատրոն վարձել և այլն և այլն:

Վեր կացավ տեղից և ուստավը ձեռքին մի առ մի հերքեր Աբելյանի ասածները Տիգ. Հովհաննիսյանը: Հերքումը նույնչափ պերճախոս էր, որքան և մեղադրանքը: Թիֆլիսի լուսավորության իշխանը ձեռով իշխանական նշան արավ, որ վեճին վերջ տրվի: Եվ բոլորը սարսափած լռեցին: Եվ ոչինչ չպարզվեց: Եվ ես ոչինչ չհասկացա:

Ապա, դուն իս իմ պարունը, սկսվեց ժողովի ամենանշանավոր զբաղմունքը ընտրություններ: Պետք էր ընտրել վարչության հերթով հրաժարվող երկու անդամների պ. պ. Յ. Տիգրանյանի և բժշկապետ Վահան Արծրունու փոխարեն նորերը: Ժողովը միաձայն խնդրեց պ. Տիգրանյանին շարունակել անդամ և նախագահ մնալու: Նա համեստաբար մերժեց, բայց վերջ ի վերջո զիջեց ժողովի տրամադրությանը:

Ժողովը վերջացավ ընդհանուրի տկողինակերությամբ, վասնզի ամենքը քաղցած էին: Շատերը նախագահի բաժանած տկողիները փոխանակ ընտրողական արկղերը գցելու, իրանց փորերն էին գցում:

Նույնը արի և ես: